

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ողորմեցէ՛ք ձեզի, ո՛վ քրիստոնեաներ, եւ մի՛ մնաք մեղքի մէջ: Մեղաւորը կը նմանի հիւանդի, որ եթէ ծածկէ իր ցաւը եւ չխոստովանի բժիշկին, հիւանդութեան դեղ չի գտներ: Նոյնպէս քահանան, հոգիներու բժիշկ է: Ան որ ծածկէ իր մեղքերը եւ չխոստովանի, յաւիտենական մահով կը մեռնի:


Մեղանչողը այնքան ատեն, որ ողջ է սատանային բերանը կը գտնուի: Երբ խոստովանի մեղքը, կը փրկուի անոր բերանէն: Իսկ եթէ մեղքով մեռնի կը մտնէ սատանային փորը, որ դժոխքն է: Մարդ երբ մեղք կը գործէ եւ չխոստովանիր, մահ եւ կորուստ կը պատճառէ հոգիին, ինչպէս օձին եւ կարիճին խայթոցը պատիկ է, բայց դառն կսկիծ եւ մահ կը պատճառէ:

Արդ, խոստովանեցէ՛ք, որովհետեւ անիկա է մեղանչողներուն դեղն ու բժշկութիւնը: Ան որ չխոստովանի եւ մեղքով մեռնի, յետ մահու ոչ մէկ հնար եւ փրկութեան յոյս կայ: Այնքան ժամանակ որ մարմինով կ'ապրինք այս աշխարհին մէջ, հոս է մեղանչողներուն փրկութեան յոյսը: Ոմանք կը վախնան, մի գուցէ քահանան կը հրապարակէ իրենց խոստովանութիւնը: Ասոր համար Ս. Ներսէս կանոն դրած է, որ «Քահանան եթէ ապաշխարողի մը խոստովանութեան ու ապաշխարանքի խօսքեր յայտնէ, նզովուի եւ կարգալոյծ ըլլայ» (Կանոն ԺԹ.):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՅԻ

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀԱՅՏԱՆՈՒՄԸ

2.- Պատրաստութիւն ընծաներուն

Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱԽԱՏԱՅԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ


Արդարօրէն երկնային յաիտեցական արքայութեան գրաւականը եղող Աստուածորդոյն՝ Փրկչին մարմինն է, որ կը բարձրանայ պատարագիչ քահանային ձեռքերուն մէջ. «Ի սրբութիւն սրբոց»:

Հաւատացեալներու Հայացքին դիմաց պատարագեալ Աստուածորդին կը բարձրանայ, կը բարձրանայ որպէս Սրբութիւն սրբոց, Սրբութիւն, որ վերապահուած է միայն ու միայն արդարներուն, անմեղներուն եւ հոգիով մաքրուածներուն ու սրբուածներուն. կը բարձրանայ որպէս հաղորդութիւն՝ բաշխելու բոլոր անոնց, որոնք հոգեպէս պատրաստուած են հաղորդուելու՝ ճաշակելու Փրկչին Մարմինն ու Արիւնը...

Շարունակելի



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՌՅՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԸ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 12 ՅՈՒՆԻՈՒՄՐ 2025 ԹԻԻ 2

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԿՍՏՈՒՄԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ՀՈ 1.1-7: ՂԿ 2.1-7

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 2.1-7

Այդ օրերուն Օգոստոս կայսր հրամանագիր հանեց՝ իր կայսրութեան սահմաններուն մէջ գտնուող բոլոր բնակիչներուն մարդահամարը կատարելու: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ Սուրիոյ կառավարիչ Կիւրենիոսի օրերուն: Ամէն մարդ իր ծննդավայրը կ'երթար իր անունը արձանագրել տալու համար: Յովսէփ, Դաւիթի սերունդէն ըլլալուն համար, Գալիլիայի Նազարէթ քաղաքէն ելաւ եւ իր անունը արձանագրել տալու համար գնաց Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքը՝ Դաւիթ թագաւորի ծննդավայրը: Իրեն կ'ընկերանար իր նշանածը՝ Մարիամ, որ յղի էր:

Բեթլեհէմի մէջ, Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասաւ եւ ծնաւ իր անդրանիկ զաւակը, որ փաթթեց խանձարուրի մէջ եւ դրաւ մսուրի մը մէջ, որովհետեւ պանդոկին մէջ իրենց համար տեղ չկար:

«Տէ՛ր, յիշէ՛ զիս...»

«Տէ՛ր, յիշէ՛ զիս, երբ քու թագաւորութեամբդ գաս» (Ղկ. 23.42): Քրիստոսի խաչակից աւագակը աշխարհի մէջ եղաւ առաջին անձը որ այս բառերը արտասանեց: Իրմէ ետք միլիոնաւոր հաւատացեալներ կրկնեցին նոյն իր խօսքը, յայտնեցին նոյն փափաքը՝ տեղ ունենալ թագաւորութեան մէջ: «Տէ՛ր, յիշէ՛ մեզ, երբ քու թագաւորութեամբդ գաս»: Յիշէ՛ մեզ երկնաւոր Հօր դիմաց եւ բարեխօսէ մեզի համար: Յիշէ՛ մեզ երբ գաս աշխարհը դատելու եւ գթա՛ մեր վրայ: Յիշէ՛ մեզ երբ կենաց գիրքին մէջ արձանագրուած անունները աչքէ անցնելու սկսիս: Յիշէ՛ մեզ երբ սկսիս յաիտեցական ու անդամնալի վճիռ արձակելու: Յիշէ՛ մեզ մեր մահուան պահուն եւ բարի հրեշտակներդ դրկէ մեր դիմաւորութեան: Յիշէ՛ մեզ:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

Քրիստոսի անունին, այսինքն՝ Յիսուս անունը դրուելու յիշատակութիւնն է: Յիսուս կը թարգմանուի Փրկիչ, ինչպէս հրեշտակին կողմէ դնել հրամայուած էր Մարիամու Աւետման ատեն (Դուկ. Ա.31) եւ ինչպէս իրօք ալ դրուեցաւ ծնելուն Ը. օրը թլփատու-թեան արարողութեան առթիւ (Դուկ. Բ. 21), Հրեական օրէնքին համեմատ: Անուանակոչութիւնն իբր առանձին տօն նշանակուած չէ Տօնացոյցին մէջ, այլ նոր օրացոյցները սովորութիւն ըրին այսպէս նշանակել Ծննդեան Ը. օրը, Յունուար 13-ին, փոփոխելով Տօնացոյցին նշանակած Թլփատութեան տօնը: Յիսուս անունը գործածուած է սովորաբար աւետարանին մէջ, բայց այժմ աւելի գործածական է Քրիստոս անունը, որ է Մեսիա՝ Օծեալ: Աւետարանին մէջ Քրիստոսի տրուած է նաեւ Էմմանուէլ անունը (Մտք. Ա. 23), հետեւելով Եսայեայ մարգարտութեան (Եսայ. Է. 14)

ԱՌԱՎ. ԳԼՈՒԽ ԺԵ 10-12

Բարի մարդուն խրատը ընդունելի է հարազատներուն համար, իսկ անոնք որ յանդիմանութեան չեն հանդուրժեր՝ վարկաբեկիչ վախճան պիտի ունենան:

Նրբ մահն ու կորուստը յայտնի են Տիրոջ, որքան եւս առաւել՝ մարդոց սրտերը:

Անուղղայ մարդը չի սիրեր զինք յանդիմանողը եւ չի հաղորդակցիր գիտակից մարդուն հետ:

ՀՐԳՈՒՄ ՊԱՏԱՆԱԿ

Ի՞նչ է խունկին եւ խնկարկութեան նշանակութիւնը:



Աստուծոյ խունկ մատուցելը կը նշանակէ սրտի խորերէն վեր բարձրացող ջերմեռանդ աղօթք, որ հանելի է Աստուծոյ առջեւ ու նաեւ յարգանքի եւ օրհնութեան արտայայտութիւնն է մարդուն իր Արարիչին հանդէպ:

Ժողովուրդին խնկարկելը կը նշանակէ Աստուծոյ շնորհաց բաշխումին, գոր կը կատարէ պատարագիչ ֆահանան թափօրի ատեն իր օրհնութեան աղօթքներով միատեղ: Պատարագի ընթացքին ալ երբ պատարագիչը մէջ ընդ մէջ օրհնութիւն կը բաշխէ, սարկաւազը՝ որպէս Ս. Սեղանի սպասաւոր եւ օգնական ֆահանայի, անոր հետ կը դառնայ դէպի ժողովուրդը եւ կը խնկարկէ:

Սարկաւազին կողմէ ֆահանային կատարուած խնկարկութիւնը յարգանքի արտայայտութիւնն է Աստուծոյ ծառային՝ դեսպանին հանդէպ:

Թող որ մեր խունկն ու աղօթքները ընդունելի ըլլան միշտ եւ Աստուած ինք պարգեւէ մեզի իր Աստուածային շնորհները եւ իմաստութիւնը:

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՄ

ԺԻՏԱԿԱՎԱՆԻՆ ՄԷՋ ԴՐԱԿԱՆՆԵՐ ՏԵՄՏԵԼ

«Աղամ եւ իր կինը երկուքն ալ մերկ էին եւ չէին ամչնար» (Օ՛ն 2.25): Մենք ընդհանրապէս երբ խօսինք Աղամի եւ Եւայի մասին՝ շեշտը կը դնենք անոնց պատուիրանապահութեան եւ անհնապանդութեան վրայ: Շատ քիչ կը պատահի խօսինք անոնց մեղքի կեանքէն առաջ ունեցած սրբութեան կեանքին մասին: «Մերկ էին եւ չէին ամչնար»: Այս բառերը Աղամի եւ Եւայի բացարձակ սուրբ ըլլալը կը ցուցնեն, անոնց սրտի կատարեալ մաքրութիւնը կ'արտացոլացնեն:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ՊԱՍՐ:

Անկասկած որ կեանքը ժխտական երեւոյթներով լեցուն է: Հակառակը ըսելը՝ կեղծիք 8 պիտի ըլլար: Բայց իբրեւ վերածնած քրիստոնէաներ, մեր կոչումն է ժխտականին մէջ դրականը տեսնել: Մեր շուրջ լեցուն են անհնապանդ եւ մեղանչող Աղամներ եւ Եւաներ, բայց իբրեւ Աստուծոյ վաւակներ, մեր առաքելութիւնն է անոնց մէջ տեսնել մաքուր բաժինը, եւ աղօթող ըլլալ այդ մաքուր բաժինն համար:

ԱՌԱՎ 8

«Կ'աղաչեմ ձեզի ո՛վ մարդիկ, խօսքս ձեզի է, որ կ'ուղղեմ. ո՛վ պարզամիտներ, խորագէտ եղէք, ո՛վ անմիտներ, խրատս պահեցէ՛ք ձեր սրտերուն մէջ. լսեցէ՛ք զիս, որովհետեւ աղօտը բաներ պիտի ըսեմ ձեզի, շրթներս ուղիղ թելադրութիւններ պիտի ընեն ձեզի. ես միշտ ճշմարտութիւնն է որ կը խօսիմ, ինձի համար պիղծ են ստախօս լեզուները:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒՋԵՍ...

ԵԹԷ ՄԵԱՅՆԱԿ ՈՒ ԼՔՈՒԱԾ ԿԸ ԶԳԱՍ, ԿԱՐԳԱ՝ Յով. 14.15-31

Եթէ կը սիրէ՞ գիս, պիտի գործադրէ՞ իմ պատուիրաններս: Եւ եւ Հօրս պիտի աղաչեմ, որ ուրիշ միտքարիչ մը տայ ձեզի, որպէսզի յաւիտեան ձեզի հետ ըլլայ: Անհկա Սուրբ Հոգին է, որ նշմարութիւնը կը յայտնէ: Աշխարհը չի կրնար գայն ընդունիլ, որովհետեւ ո՛չ կը տեսնէ եւ ո՛չ ալ կը ֆանջնայ գայն: Բայց դուք կը ֆանջնա՞ք գայն, որովհետեւ ձեր մէջ պիտի մնայ եւ ձեր հետ պիտի ըլլայ:

Որք պիտի չձգեմ ձեզ. կրկին պիտի գամ ձեզի: Մօտ ատենէն այլեւս աշխարհը զիս պիտի չտեսնէ, բայց դուք պիտի տեսնէ՞ք զիս, որովհետեւ եւ կ'ապրիմ եւ դուք ալ պիտի ապրիք: Այն օրը դուք պիտի գիտնա՞ք, թէ եւ Հօրս մէջ եմ, դուք՝ իմ մէջս եւ ես՝ ձեր մէջ: Ով որ կ'ընդունի իմ պատուիրաններս եւ կը գործադրէ զանոնք ա՛ն է, որ զիս կը սիրէ: Եւ հայրս պիտի սիրէ զիս սիրողը: Ես ալ պիտի սիրեմ գայն եւ ինքզինքս յայտնեմ անոր:

Յուզան, ոչ իսկարիտացի, ըսաւ իրեն.

- Տէ՛ր, ի՞նչպէս կ'ըլլայ, որ ինքզինքդ մեզի պիտի յայտնես եւ ոչ թէ աշխարհին:

Յիսուս պատասխանեց անոր.

- Ով որ կը սիրէ զիս՝ խօսքս կը գործադրէ: Հայրս ալ պիտի սիրէ գայն եւ ես ու հայրս անոր պիտի գամք եւ անոր հետ բնակինք: Եւ ով որ չի սիրեր զիս՝ խօսքս չի գործադրեր: Այս ըսածներս որ լսեցիք իմ խօսքս չեն, այլ՝ խօսքերը Հօրս, որ զիս որկեց: Այս բոլորը խօսեցայ ձեզի, քանի տակաւին ձեզի հետ եմ: Բայց Միտքարիչը՝ Սուրբ Հոգին, որ հայրս ձեզի պիտի դրկէ իմ անունովս, անհկա ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի... Շարունակել կարգալ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԷՆ: